ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

№ 1112/54026-21
20.12.2021

Բուզանդի 1/3, 8-րդ հարկ
հեռ.՝ 041 563363, էլ. հասցե՝ armenmirzoiian@gmail.com

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի լրագրող
Արմեն Միրզոյանին

Հարգելի՛ պարոն Միրզոյան

Ի պատասխան Ձեր հարցման (ԱԳՆ մուտքագրվել է 14.12.2021թ.)՝ հայտնում ենք հետևյալը.

1. ՀՀ արտաքին գործերի նախարարությունն արդեն իսկ հանրությանը տեղեկացրել է, որ Հայաստան-Թուրքիա երկխոսության գործընթացում Հայաստանի հատուկ ներկայացուցիչը կլինի ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը:
2. Ավելի վաղ, ՀՀ ԱԳՆ-ն հանդես էր եկել հայտարարությամբ, որ մի շարք միջազգային գործընկերներ, այդ թվում՝ Ռուսաստանը, հայտարարել են, որ պատրաստ են աջակցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին: Ռուս գործընկերների հետ քննարկումների ընթացքում հայկական կողմը տեղեկացրել է, որ պատրաստ է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորման: Ռուսական կողմը հայկական կողմի այս դիրքորոշումը փոխանցել է Թուրքիային: Այս գործընթացին հաջորդել են երկխոսության համար հատուկ ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ Հայաստանի և Թուրքիայի հայտարարությունները:
3. Հայ-թուրքական երկխոսության համար հատուկ ներկայացուցիչներ նշանակելու վերաբերյալ կողմերի հայտարարությունները և «3+3» տարածաշրջանային խորհրդակցական հարթակի ձևավորման ուղղված քայլերն իրարից անկախ գործընթացներ են:
4. Ինչ վերաբերում է «3+3» հարթակի շրջանակներում հանդիպումներին, ապա հնչել են տարբեր առաջարկներ, սակայն այս պահի դրությամբ հաջորդ նիստի անցկացման վայրի վերաբերյալ պայմանավորվածություն չկա:
5. Զարտերային թռիչքների առնչությամբ տեղեկացնում ենք, որ ՀՀ անկախությունից ի վեր Հայաստանի և Թուրքիայի միջև կանոնավոր

չվերթներ չեն իրականացվել՝ հաշվի առնելով երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, սակայն մասնավոր ընկերությունների կողմից 1996թ.-ից մինչև 2019թ. վերջը շաբաթական մի քանի անգամ պարբերությամբ իրականացվել են չարտերային թռիչքներ: Ձեր հարցադրման առնչությամբ հավելյալ տեղեկությունների համար առաջարկում ենք դիմել ՀՀ քաղավիացիայի կոմիտե:

Հարգանքով՝

X

ՍԵՐՈԲ ԲԵՋԱՆՅԱՆ

Signed by: BEJANYAN SEROB 3912720061

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային
դիվանագիտության վարչություն

Լրատվամիջոցների հետ կապի և
հանրային դիվանագիտության բաժին
հեռ. 060620234